ՀԱՅԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ (մ. թ. ա. VI-IV հազ.)

ՕՆԻԿ ԽՆԿԻԿՅԱՆ

1982 և 1983 թթ. հրատարակած հոդվածներում իր անհամաձայնությունն ու տարակուսանքն արտահայտելով Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի հիմնարար աշխատության[1] առանձին դրույթների վերաբերյալ, Ի. Մ. Դյակոնովը, չմերժելով VI–V հազ. տնտեսության գլխավոր ճյուղերին առնչվող գիտելիքների՝ Փոքր Ասիայից Բալկաններ անցնելը, ավելի հավանական է համարում Բալկան-Կարպատները հնդեվրոպական լեզվի նախահայրենիք համարվելու տեսակետը: Մեծավաստակ գիտնականի կարծիքով հնդեվրոպական նախալեզվի կրողներն այդտեղից են տարածվել տարբեր ուղղություններով: Ինչ վերաբերում է հնդեվրոպականի առանձին ճյուղ համարվող նախահայերենին, ապա դրանով հաղորդակցվողները, բնակվելով Անատոլիայի հյուսիսարևմտյան մասը զբաղեցնող թրակացիների հարևանությամբ (հետևություն՝ հնդեվրոպացիները ապրել են և Անատոլիայի առանձին տարածքներում), աստիճանաբար տեղաշարժվելով, հետագայում մակաշերտվել են Հայկական լեռնաշխարհում բնակվող խուրրի-ուրարտական հենքի վրա: Ավարտական տեղաշարժի այդ փուլը հետազոտողը կապում է թրակա-փռյուգական ընդհանուր շարժման ժամանակաշրջանի հետ, որը համընկնում է Խեթական կայսրության անկմանը[2]:

Թ. Վ. Գամկրելիձեի և Վ. Վ. Իվանովի աշխատության որոշ հիմնադրույթների հանդեպ թեական մոտեցում են ցուցաբերում և այլ գիտնականներ[3]: Չխորանալով մանրամասների մեջ, նշենք միայն, որ ներկայացնելով հանդերձ իր տեսակետը, բայց և ընդգծելով հարցի բարդությունն ու դրա սպառված չլինելը, Ի. Մ. Դյակոնովն այն համոզմունքն է հայտնում, թե հետազոտությունների ներկա փուլում հիմնախնդրի լուծման ուղղությամբ վարկած կարող են առաջադրել միայն հնագետները:

---

[1] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы, II (Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры). Тбилиси, 1981.

[2] И. М. Дьяконов. О прародине носителей индоевропейских диалектов, II (3. Прародина и миграции).–"Вестник древней истории" (далее–ВДИ), 1982, № 4, с. 13-22; Он же. К праистории армянского языка (о фактах, свидетельствах и логике).– ИФЖ, 1983, № 4, с. 149-178.

[3] *Մանրամասները տե՛ս Լ. Ա. Բարսեղյան. Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ, Երևան, 1996, էջ 88–89, 101–104, 205–209, իսկ համահեղինակների պատասխանն իրենց առաջադրած թեզերի պաշտպանությամբ՝* Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. К проблеме прародины носителей родственных диалектов и методам ее установления.– ВДИ, 1984, ¹ 2, с. 107-122.

Մեծավաստակ գիտնականը հնագիտության հնարավորությունները չի գերագնահատում: Հարց է առաջանում. իսկ ինչպիսի՞ն է հնագիտական պատկերը: Ցավոք, առանձին հետազոտության նյութ հանդիսացող հարցի վերաբերյալ եղած մեր պատկերացումներն ավելի քան աղոտ են. հնագիտական հետազոտությունների ներկա արդյունքները դեռևս թույլ չեն տալիս հավուր պատշաճի հետևել տարբեր դարաշրջանների և տարածքների մշակույթների ընդգրկած սահմաններին, հաջորդականությանը, կրած փոփոխություններին և այլն: Տարբեր երկրներում կատարված անհամաչափ պեղումները, առանձին տարածքների հետազոտված չլինելն ու ստիպողաբար վերգետնյա նյութերի քննությամբ առաջնորդվելը, երբեմն և անհրաժեշտ գրականության բացակայությունն ու բացասական այլ իրողություններ հնարավորություն չեն տալիս ամբողջական և առավել հիմնավորված եզրակացությունների հանգել: Այդուհանդերձ, որքան էլ թերի ու անբավարար, առկա տվյալներն ուրվագծում են, ճիշտ է, շատ կողմերով դեռևս աղոտ և տարբեր հարցեր առաջադրող պատկեր, որը, սակայն, պարունակում է նաև հնագիտական ուսումնասիրություններով հիմնավորված հետևություններ. դրանք ավելի քան կարևոր նշանակություն ունեն: Վերջիններիս համադրությունը լեզվաբանական հետազոտություններով փաստարկված եզրակացությունների հետ, զգալիորեն հստակեցնելով հայերի ծագման, նրանց թրակա-փռյուգական մերձակցության և հարակից այլ հիմնահարցերի առնչվող պատկերացումները, նպաստում են մի շարք կնճռոտ հարցերի որոշակիացմանը: Ներկա հոդվածի նպատակն է (հիմք ընդունելով հնագիտական հետազոտությունների արդյունքներով հիմնավորված հետևությունները) փորձել հնարավորությունների սահմաններում ամբողջական ու կապակցված ներկայացնել Բալկաններ – Հայկական լեռնաշխարհ միջնատարածքի իրավիճակը մ. թ. ա. VI–IV հազ.:

Արևմտյան Անատոլիա – Հունաստան – Բալկաններ տարածաշրջանը մշտապես գտնվել է հնագետների ուշադրության ոլորտում: Դեռևս անցյալ դարի կեսերին Դ. Հ. Ֆրենչը, հետազոտելով Արևմտյան Անատոլիայի, Թրակիայի և Թեսալիայի վաղ երկրագործական, բայց հատկապես էնեոլիթյան ժամանակաշրջանի հուշարձանները, հանգեց այն եզրակացության, թե Էգեյանի արևելյան մասի կղզիները (Լեմնոս, Քիոս, Սամոս և այլն), ինչպես և Թրակիան ու Մակեդոնիան V–IV հազ. գտնվել են Արևմտյան Անատոլիայի ազդեցության ոլորտում, որը IV հազ. I կեսում տարանջատվել է հյուսիսային և հարավային հատվածների: Հյուսիսային հատվածը զարգացել է Տրոյա I շրջանակներում, որը հետագայում ևս (Տրոյա II–V) շարունակել է իր ազդեցության ոլորտում պահել Էգեյանի կղզիները: Իբրև ապացույց, հեղինակը նշում է դրանցում հայտնաբերված կարմիր փայլեցրած մակերեսով խեցանոթները, որոնք լայնորեն տարածված են Արևմտյան Անատոլիայում և համարվում են տարածքի բնորոշ նյութերից: Ելնելով հայտնաբերված խեցեղենի առանձնահատկություններից (մակերեսի գույնը, ամանների ձևերը, զարդերը)՝ հետազոտողը հանգում է այն կարծիքին, որ նշված հատվածներից հյուսիսայինի սահմանները ուշ էնեոլիթում հարավում անցել են մոտավորապես Հերմոս–Քիոս–Իզմիր–Բալիկեսիրի հովիտ գծով (խեցեղենի երկրորդ՝ «Ղումթեփե Ib մշակույթ» անվամբ առանձնացված այդ խմբում հեղինակը միավորում է կավախմորում հարդի խառնուրդ ունեցող, սև կամ մուգ

կարմիր և մուգ շագանակագույն մակերեսով խեցանոթները, դեպի ներս թեքվող շուրթի մոտ խողովակաձև լայն բռնակով քրեղանները, որոշ դեպքերում՝ կոճակաձև, ինչպես և սպիտակ ներկած գծազարդեր ունեցողները և այլն): Այդ հատվածի ազդեցությունը ուշ էնեոլիթում երևում է և Թեսալիայում, որն ավելի վաղ, Բեոտիայի և Պելոպոնեսի հետ, կարծես թե կրել է հարավարևմտյան Անատոլիայից եկող ազդեցությունը (կարմիր փայլեցրած խեցեղենի առկայություն): Մյուս կողմից ակնհայտ է, որ Թեսալիան անմիջական կապեր է ունեցել Բալկանների հետ, որի ապացույցը Կուկուտենի A - Գումելնիցա I նյութերի հայտնաբերումն է Օձակիում, իսկ Պարադիմիից գտնված որոշ խեցանոթներ նույնական են Կարանովո II հետ (եռոտանի ափսեներ, սևով կարմրի կամ դարչնագույնով կրեմագույն մակերեսին զարդեր ունեցող ամաններ և այլն): Հետազոտողի կարծիքով այդ նյութերը, ամենայն հավանականությամբ, խոսում են դեռևս նախորդ դարաշրջանում Արևմտյան Անատոլիա – Հունաստան – Բալկաններ եղած կապերի մասին, որոնց բնույթի վերաբերյալ, կապված նյութի սակավության հետ, հեղինակը ձեռնպահ է մնում կարծիք հայտնելուց: Ինչ վերաբերում է Թրակիայի ուշ էնեոլիթյան խեցանոթներին, ապա դրանք, բացի սևով կարմրի կամ շագանակագույնով կրեմագույնի վրա արված զարդեր ունեցող ամաններից, ներկայացված են և սև փայլեցրած, կտրվածքով ու սպիտակ ներկով ընդելուզված զարդեր ունեցող խեցանոթներով, որոնց զուգահեռներն առկա են Արևմտյան Անատոլիայում (Բեյջեսուլթան, Ղումթեփե, Կայիշլար և այլն) ու Մակեդոնիայում[4]:

Նախնական բնույթի այս հետևությունները զգալի չափով լրացվեցին հետագա հետազոտությունների արդյունքներով: Մասնավորապես, Ջ. Մելարտը, խոսելով Փոքր Ասիա–Բալկաններ–Հունաստան մշակութային կապերի մասին, մատնանշում է, որ Թեսալիայի ու Մակեդոնիայի նեոլիթյան խեցեղենն ակնհայտորեն կրում է Արևմտյան Անատոլիայից եկող ազդեցությունը: Դրա ապացույցներից կարող է հանդիսանալ Թեսալիայի վաղագույն խեցեղենը, որը, նման լինելով մոտ 5800 թ. թվագրվող Չաթալ – Հյույուկ II նյութերին, չի կարող ավելի վաղ լինել, քան 5600 թ.: Հետազոտողը ցույց է տալիս նաև, որ Հաջիլար VI բնորոշ կարմիր մակերեսով խեցանոթները, տարածված լինելով Բեյշեհիր լճից մինչև Էգեյանի ծովեզերքը, հայտնվում են Քիոս, Սկիրոս և մյուս կղզիներում՝ շարունակելով հանդիպել Արևմտյան Անատոլիայում մինչև Հաջիլար I (5250 – 5000 թթ.) մշակույթի երևան գալը: Վերջինիս բնորոշ են կարմիր գույնով կրեմագույն մակերեսին և կամ սպիտակով կարմիր մակերեսին զարդեր ունեցող խեցանոթներ: Էական է այն հանգամանքը, որ համանման նյութերը Էլաթեայում, Կենտրոնական Հունաստանում, ինչպես և Թեսալիայում, երևան գալով նախասեսկլոյին համապատասխանող շերտում, թվագրվում են 5080 թ., ինչը և ցույց է տալիս դրանց Անատոլիայից անցնելն ու Արևմուտքում տարածվելը: Այդ են փաստում և Նեա - Նիկոմեդիայի (Մակեդոնիա) պեղումների արդյունքները: Այդտեղ դրանց հետ հանդիպում են և Անատոլիայից եկած ազդեցությամբ պատրաստված, նախկինից հայտնի, մուգ դեղին և գորշ մակերեսներով, Հաջիլար VI – V շերտերից

[4] D. H. F r e n c h. Late Chalcolithic Pottery in North – West Turkey and the Eagean.– “Anatolian Studies” (AS), XI, Ankara, 1961, p. 99 – 122.

հայտնի խեցանոթներ: Մակեդոնիայից հյուսիս՝ Մարիցա գետի և Սոֆիայի շրջանի հուշարձաններում, մոտավորապես 5160 – 4915 թթ. տարածվում են սպիտակ ներկով ստացված զարդանախշ ունեցող ամաններ, իսկ նեոլիթյան հուշարձաններում հայտնաբերվում են միայն անզարդ, միագույն և կամ հաստ, ջրիկ կավազանգվածով երեսպատված («Բարբոտինյան» մշակույթ) խեցանոթներ, որոնց հետ կան և մատնադրոշմ ու եղունգազարդ ունեցողներ: Հետազոտությունների արդյունքները հեղինակին հանգեցնում են այն հետևության, թե՝ «Անատոլիան, որ երկար ժամանակ դիտվում էր իբրև «Արգավանդ կիսալուսնի» բարբարոսական ծայրամաս, այժմ պետք է համարվի Մերձավոր Արևելքում նեոլիթյան մշակույթի առավել զարգացած կենտրոն: Դրա (Անատոլիական մշակույթի – Օ. Խ.*) ազդեցությունն ավելի երկար է զգացվում… Եվրոպայում, որովհետև այդ մայրցամաքում Անատոլիայի նեոլիթյան մշակույթը սկիզբ դրեց երկրագործությանը, անասնապահությանը և մայր աստվածուհու պաշտամունքին՝ մեր քաղաքակրթության հիմքերին»*[5]*: Նկատենք, սակայն, որ, ցույց տալով հանդերձ այդ նմանությունները, Ջ. Մելարտը, դրսևորելով մեծ զգուշավորություն, ավելացնում է, թե «…քանի դեռ Արևմտյան և Հյուսիսարևմտյան Անատոլիայում չունենք պեղված բնակատեղիներ, անզգույշ կլիներ խոսել Հաջիլարի և Հունաստանի, Մակեդոնիայի ու Բուլղարիայի հնավայրերի միջև խիստ սերտ կապերի առկայության մասին: Քանի դեռ չգիտենք, թե Անատոլիայի արևմտյան ափին ինչն է համապատասխանել Հաջիլարին, անհնար կլինի ասել, թե արդյոք Էգեյանի կամ Մարմարայի ծովեզերքի մշակույթների նույնությունը հետևանք էր Անատոլիայի նախասկզբնական գաղութացման, թե անատոլիական գաղափարների տարածմանը Եվրոպայում»*[6]*:*

Թեական երանգավորումներից զերծ է Է. Մելասի կարծիքը: Հետազոտողը համոզված է, որ բնակչությունն անցել է Դոդեկանեսի կղզիներ (Հոդոս, Ալիմնիա, Լերոս և այլն) Անատոլիայի հարավ-արևմուտքից V *հազ., թերևս՝ նեոլիթում: Այդ տեղաշարժերը շարունակվել են և հետագայում: Նա նշում է, որ Դոդեկանեսից հայտնաբերված ուշ էնեոլիթյան նյութերը նման են Բեյջեսուլթանից գտնված (շերտը նշված չէ* – Օ. Խ.*), ձևով վաղ բրոնզեդարյան խեցանոթներին մերձեցող նմուշներին: Այդ նմանությունը դիտվում է նաև կավամանների՝ սպիտակ գույնով սև մակերեսին արված զարդերի մեջ: Նմանության նույն աստիճանն են դրսևորում նաև Տիգանիից, Էմփորիոյից և Տրոյայի վաղ շերտից հայտնաբերված համաժամանակյա նյութերը: Կարիայի ու Դոդեկանեսի (Յասոս, Մյուշկերի, Մինդոս, Կոս, Կալիմնոս) նյութերի նմանությունը դիտվում է և վաղ բրոնզի դարաշրջանում: Մասնավորապես, ուշադրություն է գրավում Կալիմնոսից և Յասոսից գտնված էնեոլիթյան, ինչպես կտրվածքով, այնպես էլ սպիտակ գույնով սև մակերեսին արված զարդեր ունեցող խեցեղենի նույնությունը (Դ. Հ. Ֆրենչի I և II խմբերը՝ իբրև կավախմորում հարդի խառնուրդ չունեցող Բեյջեսուլթանի և հարդ պարունակող՝ «Ղումթեփե - Ib» տիպ): Ամփոփելով հետազոտութ-*

---

[5] Դ ж. М е л л а р т. Древнейшие цивилизации Ближнего Востока. М., 1982, с. 79.

[6] *Նույն տեղում, էջ 96–111: Հաջիլարի շերտագրության մանրամասները տե՛ս* J. M e l l a a r t. Excavations at Hacilar.– AS, XI, p. 34–75.

յունների արդյունքները, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Էգեյանի հարավարևելյան մասը, այդ թվում և Կրետեն, սկսած V հազ. (թերևս նեոլիթից. նեոլիթում Կիպրոս տեղաշարժն է փաստում և Ջ. Մելարտը) բնակեցվել է Արևմտյան Անատոլիայից եկած բնակչությամբ, երբ տեղի էին ունենում բարբառների բաժանումները: Դրա ապացույցը, հետազոտողի կարծիքով, Կալիմնոս, Հռոդոս, Արևմտյան Անատոլիա, Կիկլադներ, Կիպրոս մշակույթների նույնությունն է, որը հարկ է դիտել իբրև մեկ ամբողջություն: Հեղինակը հակված է այդ տեղաշարժվողներին նույնացնել կարիացիների հետ, որոնք տարածվել են ողջ Էգեյանում: Այդ էթնո-մշակութային միասնությունն են փաստում ոչ միայն նյութերի նմանությունը, այլև՝ լեզվական ու առասպելական տվյալները: Հեղինակը միաժամանակ մատնանշում է, որ, ըստ մարդաբանական տիպի, տարածաշրջանի բնակչությունը հավասարապես ներկայացված է Էգեյանի լայնագանգ և Անատոլիայի եվրո - աֆրիկյան երկարագանգ տեսակներով: «Էթնոս» հասկացությունը, սակայն, ընդգծում է հեղինակը, չպետք է ընդունել այսօրվա չափանիշներով: Նա չի բացառում, որ Արևմտյան Անատոլիայի հյուսիսարևմտյան մասը կարող էր բնակեցված լինել կարիացիներին ազգակից լուվիացիներով: Է. Մելասը նշում է, որ III հազ. արդեն բնակչության տեղաշարժը հակառակ ուղղությամբ է ընթանում, որի վկայությունն են Փոքր Ասիայում երևան եկած Էգեյան տարրերը[7]:

VI – V հազ. և հետագայում տեղի ունեցող տեղաշարժերի այս պատկերը զգալիորեն հստակեցրին Մարմարայի արևելյան և արևմտյան տարածքներում կատարված հետազոտությունների արդյունքները (1980 – 1985 թթ. այդ շրջաններում ուսումնասիրվել են շուրջ 300 բնակավայր, տարբեր տեսակների 800 դամբարան): Դրանք ցույց են տալիս, որ առաջին ալիքը, եթե անտեսենք ավելի վաղ տեղի ունեցած շարժումները, Անատոլիայի հյուսիսարևմտյան մասից, Մարմարայով Թրակիա է անցել VI հազ.: Մարմարայի արևելյան տարածքներից հայտնաբերված այդ ժամանակաշրջանի խեցեղենը պարզունակ, սև մակերեսին կտրելու եղանակով ստացված գծազարդեր ունեցող նյութեր են: Ցավոք, ընդհանրացնող բնույթ կրող հոդվածում Մ. Օգդոդանը, առանց մանրամասնելու և նյութերի նկարներ բերելու, նշում է միայն, որ դարաշրջանի վերջում տեղաշարժն ընթանում է հակառակ ուղղությամբ: Եկվորներն իրենց հետ բերում են նեոլիթյան ավանդույթները շարունակող, կտրած գծազարդերով, բայց կարմիր մակերես ունեցող խեցեղեն: Նա չի բացառում, որ այդ ալիքը կարող էր գալ և Էգեյանից: Այդ ավանդույթներն երկար են պահպանվում, բայց միջին էնեոլիթում տեղի են տալիս այլ մշակույթի. Անատոլիայից և Թրակիայից գտնված խեցեղենը, նշում է հեղինակը, առանձնանում է իրանի շեշտված անցումներով, ձգված վզով, ալիքաձև ու կտրած գծազարդերով: Այդ բնակիչները Բալկաններից եկած վինչա մշակույթի կրողներն են: Էնեոլիթի վերջում Թրակիայի և Արևմտյան Անատոլիայի բնակավայրերն ավերվում են: Գտնված նյութերը, որոնք թվագրվում են IV հազ.,

---

[7] E. M. M e l l a s. The Dodecanese and West Anatolia in Prehistory: Interrelationships Ethnicity and Political Geography.– AS, XXXXIII, 1988, p. 109 – 111. *Կիպրոսի նախախեցեղենային նեոլիթին պատկանող հնագույն Խիրոկիտիա բնակավայրը, որի բնակչությունն առանձնանում է շեշտված կարճագանգությամբ, թվագրվում է VI հազ. I քառորդով. տե՛ս* Д ж. М е л л а р т. *Նշվ. աշխ., էջ 53–57:*

պատկանում են Բալկանների հյուսիսին բնորոշ նախակուկուտենի մշակույթին: Յավոք, հեղինակը չի նշում, թե Արևմտյան Անատոլիայի որ տարածքների բնակավայրերն են ավերվում: Նա ասում է միայն, որ IV հազ. վերջում տարածաշրջանում խիստ ուժեղ է զգացվում Կենտրոնական Անատոլիայից եկող ազդեցությունը[8]*:*

Բալկաններից Հայկական լեռնաշխարհ ենթադրվող ներթափանցումը փաստելու կամ ժխտելու, ինչպես և շարադրանքի ամբողջականությունը պահպանելու նպատակով, ընդհանուր գծերով հետևենք նշված մշակույթների (*վինչա, գումելնիցա, նախակուկուտենի և այլն*) *զարգացմանը, զբաղեցրած տարածքներին, տեղաշարժերի ուղղությանը:*

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հարավարևելյան Տրանսիլվանիա–Արևելյան Մերձկարպատներ տարածքում ձևավորված կուկուտենի– տրիպոլյան (ըստ Ռումինիայի Յասսի քաղաքի մոտ գտնվող Կուկուտենի և Կիևին մերձակա Տրիպոլյե գյուղի անունների) միասնական մշակույթը (ժամանակագրական ընդգրկումը՝ XXXVIII/XXXVII–XXV/XXIV դդ.) սկիզբ է առել Սիրետ – Դնեստրի միջին հոսանքում տարածված, ռումին հնագետների կողմից նախակուկուտենի անվանված մշակույթից, որն ընդգրկում է V–IV հազ. I կեսն ընկած ժամանակաշրջանը: Այդ մշակույթը նրանք փուլաբաժանում են երեք (I, II, III), իսկ խորհրդային հետազոտողները՝ 6 ենթափուլ ներառնող 2 շրջանի: Անկախ այս կամ այն փուլաբաժանումից՝ հետազոտողները համամիտ են, որ նշված մշակույթի վաղագույն շրջանին բնորոշ են ժապավենային եղանակով պատրաստված ու կտրվածքով ստացված զարդեր ունեցող խեցանոթները, որոնք I շրջանի II փուլում, որը համապատասխանում է նախակուկուտենի III (IV հազ. I կես), իրենց տեղը զիջում են թրծումից հետո կարմիր օխրայով ներկած մակերես ունեցող ամաններին: Ասվածից հետևում է, որ Մ. Օզդոդանի նշած նախակուկուտենի մշակույթը բերողները Թրակիայում և Արևմտյան Անատոլիայում են հայտնվել IV հազ. I կեսում, որը համընկնում է կուկուտենի – տրիպոլյան մշակույթի հյուսիսարևելյան և հարավարևմտյան մասերի բաժանման ժամանակաշրջանին:

Վաղ փուլին (V–IV հազ. սկիզբ) են պատկանում և ջրիկ կավազանգվածով երեսապատված խեցանոթներն ու Կարպատ – Դանուբ տարածքն ընդգրկող «Վինչա» մշակույթը: Կուկուտենի – տրիպոլյան մշակույթի այդ I շրջանին բնորոշ են սև կամ կարմիր գույնով սպիտակ հիմնագույնի վրա արված զարդեր ունեցող ամանները, երկրորդին՝ սևով նարնջագույն մակերեսին և ավարտական փուլին՝ սևով ու սպիտակով կարմրի և կամ սևով ու կարմրով սպիտակ մակերեսին զարդեր ունեցող խեցանոթներ: Ինչ վերաբերում է Դնեպր – Պրուտ – Ստորին Դանուբ տարածքն ընդգրկող «Գումելնիցա» մշակույթին (IV հազ. I կես), ապա այն յուրատեսակ շարժափոկ է հանդիսացել վաղ տրիպոլյան և հյուսիսբալկանյան մշակույթների միջև[9]*: Այս պատ-*

---

[8] M. Ö z d o ğ a n. Marmara Region Surface (Istanbul University's Contributions to Archaeology in Turkey 1932 – 2000). Istanbul, 2001, p. 286.

[9] *Մանրամասները տե՛ս* Энеолит СССР (в серии "Археология СССР"). М., 1982, с. 166-167, 173-190, 229-230; Б. К. Б р у к н е р. О связях энеолитических культур Югославии, Болгарии и Юго-Запада СССР (по материалам поселений).– "Кавказ в системе палеометаллических культур Евразии" (далее – КСПКЕ),

կերը մեծապես հարստացվեց Բուլղարիայում վերջին 30–40 տարիների ընթացքում կատարված պեղումների արդյունքներով: Դրանք ցույց են տալիս, որ Բուլղարիայի վաղ էնեոլիթյան (V – IV հազ. սկիզբ) մշակույթը, որի սահմաններում են նաև Էգեյան Մակեդոնիան և Սավան մերձսնծովյան շրջանում, համաժամանակյա լինելով վաղ նախակուկուտենի – Տրիպոլյե A մշակույթին, չնայած տեղական որոշակի առանձնահատկությունների, առանձնանում է մի շարք ընդհանրություններով (գրաֆիտով ներկած խեցեղեն, կտրվածքով ստացված զարդերը սպիտակ կավով և օխրայով ընդելուզել և այլն): Միջին էնեոլիթում այդ ընդհանրությունը ներառում է Մոլդավիայից Արևելաբուլղարական լեռներն ընկած տարածքը, որտեղ IV հազ. երևան են գալիս էթնոմշակութային 3 խոշոր համալիր. դրանք համապատասխանաբար ընդգրկում են թերակղզու հյուսիսարևելյան կեսը, մերձսնծովյան շերտն ու Բեսարաբիան, Վարնա – Բոլգրադ տարածքները: Բալկանների հյուսիս-արևելքում ծաղկող այս մշակույթները ուշ էնեոլիթի վերջում (վաղ բրոնզի սկիզբը ներկայումս դիտվում է XXXII/XXX դդ.) հանկարծակի անհետանում են. քարտեզագրված բոլոր 500 բնակավայրերում կյանքը միանգամից կանգ է առնում: Հետազոտողի՝ Խ. Տոդորովայի կարծիքով, այդ երևույթը պայմանավորված է եղել, հիմքում մի շարք պատճառներ ունեցող, հարավ-ռուսական տափաստաններից սկիզբ առած և հետագայում շարունակվող քոչվոր անասնապահների տեղաշարժերով: Դրա վկայությունն են խեցիով արված զարդ ունեցող կոպիտ ամանները, որոնք տարածքում առաջին անգամ են երևում. այդպիսիք Թրակիայում դեռևս հայտնաբերված չեն: Հակառակ դրան, այդ փուլին հաջորդող շրջանում, հյուսիսարևմտյան Բուլղարիայում տարածվում են «տափօղակաձև» ելուստով կանթ ունեցող խեցանոթները: Էնեոլիթից վաղ բրոնզին անցման շրջանում հյուսիսարևելյան Բուլղարիայի և կուկուտենի – տրիպոլյան մշակույթների միջև եղած կապերը դառնում են անմիջական, դիտվում է հատկապես հյուսիս-արևելքից դեպի արևմուտք տեղաշարժ[10], որն ընթանում է 2 ուղղությամբ: Դրանցից մեկը հյուսիսկարպատյանն է, որը Դնեպրով անցել է դեպի հարավային Լեհաստան, մյուսը՝ հարավկարպատյանը կամ դանուբյանը, որը ձգվել է Դոբրուջայով (Բուլղարիա) դեպի Բանատա (Ռումինիա-Սերբիա), որտեղից և Կենտրոնական Կարպատներ ու Միջին Եվրոպա: Բալկաններում հյուսիսային տափաստանաբնակների ներկայությունը, այլևայլ հուշարձանների շարքում, փաստվում է և յուրատեսակ պարանազարդ ունեցող խեցանոթների առկայությամբ, որոնք ուշ էնեոլիթում հանդես են գալիս Կարպատներում, Բուլղարիայում (Էզերո, VI–VII շերտեր), Սերբիայում, Թեսալիայում: Ուշ էնեոլիթում այդ նորահայտ հուշարձանների երևան գալը համընկնում է ռումինա - բուլղարական մերձդանուբյան շրջաններից Սելկուցա - 4 մշակույթի տեղաշարժմանը, որը մեկ թևով հարավ է ուղղվում: Հետազոտողներն

Тбилиси, 1987, с. 203-205; Д. Я. Т е л е г и н. Трипольская и ямная культуры; вопросы хронологии и синхронизации культур медного века юга Украины.– КСПКЕ, Тбилиси, 1987, с. 120-127.

[10] Х. Т о д о р о в а. Энеолитические культуры Болгарии и их северовосточные связи.– КСПКЕ, Тбилиси, 1987, с. 182–189.

ընդունում են, որ հարավ-ռուսական տափաստաններից տեղաշարժվող այդ անասնապահները հնդեվրոպացիներ են եղել[11]:

Հնագիտական հետազոտությունների, անհրաժեշտության սահմաններում կատարված քննության արդյունքները Արևմտյան Անատոլիա–Հունաստան–Բալկանների տարածքում, VI–IV հազ. մշակութային կապերի վերաբերյալ, ինչպես տեսնում ենք, հետազոտողների մոտ էական տարակարծություններ չեն առաջացնում. առանձին դեպքերում թեական բնույթի որոշ վերապահումներ ցուցաբերելով, նրանք համամիտ են, որ տարածաշրջանի մշակույթների նույնությունը Անատոլիայից դեպի Բալկաններ, Էգեյան կղզիներ և Հունաստան, տարբեր կենտրոններից ու ժամանակներում կատարված տեղաշարժերի արդյունք է: Արդ, եթե լեզվաբանների կողմից ընդունվում է, որ համահնդեվրոպական նախալեզվի տրոհումը սկսվել է նշված ժամանակաշրջանում, ապա պետք է ընդունել, որ տեղաշարժվողներն այդ նախալեզվով հաղորդակցվողներն են եղել: Բնականաբար, այս եզրակացությունը չի մերժում նախահայերի՝ Բալկաններից Հայկական լեռնաշխարհ տեղաշարժված լինելու տեսակետը. նախահայերենը կարող էր ձևավորվել և Բալկաններում V–IV հազ.: Բնականաբար, հարց է առաջանում. արդյոք նախահայերենով հաղորդակցվողները եղե՞լ են նախակուկուտենի մշակույթը կրողների և կամ Բալկաններ-Էգեյանից վերադարձողների շարքում: Այս հարցի պատասխանը ժխտական է, քանի որ վերը հիշատակված մշակույթներից և ոչ մեկը Հայկական լեռնաշխարհ մուտք չի գործել: Համոզվելու համար դիմենք Անատոլիայի հնագիտական քարտեզին, որի արևմտյան տարածքում, ինչպես նշվեց վերևում, IV հազ. I կեսում ձևավորվել էին մշակութային երկու շրջաններ: Վերջիններիս զարգացումը, նորանոր տարածքներ ներառնելու իմաստով, ավելի քան բուռն է եղել. այդ են ցույց տալիս հետազոտությունների արդյունքները:

Ուսումնասիրելով հարավային Անատոլիայի նեոլիթի և էնեոլիթի դարաշրջաններին պատկանող նյութերը, Ջ. Մելարտը նշում է, որ դրանք դրսևորում են տարածքաժամանակագրական որոշակի տարբերություններ: Այսպես՝ արևելքում Ալադաղ, չի բացառվում և Աքշիգյոլ (Թոփադա), հասած Կոնյայի նեոլիթյան մշակույթը, որի հյուսիսային սահմանը Իլիսափինարն է հանդիսացել (ըստ 1960-ականների տվյալների), հարավում՝ Ջիհանբեյլիի մերձակայքում, սահմանակցել է այլ՝ Կիլիկիայի ծայրամասային շրջան հանդիսացող մշակույթի, որը տարածվել է Սիլիֆկե – Կալի-

[11] Н. Т а с и ч. Связи южно-русских степей и югославского Подунавья в энеолите.– КСПКЕ, Тбилиси, 1987, с. 204–210; Б. Й о в а н о в и ч. Курганы ямной культуры в югославском Подунавье.– КСПКЕ, Тбилиси, 1987, с. 211–217.


ԲԱԼԿԱՆՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ VI-IV ՀԱԶ.
ՍԻՆԵՍԱՏԻՎ ՔԱՐՏԵՂ
Կազմեց և ծծագրեց Օ.Ս. ԽՆԿԻԿՅԱՆԸ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ամառուղիայից արևմուտք կատարված տեղաշարժերը (VI-V հազ.)
Արևմուտքից Ամառուղիա կատարված տեղաշարժերը (IV հազ.)
Ներսամառուղիական տեղաշարժեր
Ուբեյդյան մշակույթի տարածումը
ՈՒԲԵՅԴՅԱՆ
ՀԱՍԱՆ ՏԻՐՈՒՅԱՆ
ՄԻՍՈՒ
ՍԱՎԱՐԻԱ
ԳՈՒՄԵԼՆԻՑԱ
ԲՈՒԽԱՐԵՍՏ
ՄԵԼԿՈՒՅՑ
ԲԵԼԳՈՐԱԴ
ՍԱՎԱՐԻԱ
ԹՐԱԿԻԱ
ՄԱԿԵԴՈՆԻԱ
ԹՈՒՐՔԻԱ
ԲԱԼԿԱՆՅԱՆ
ՍԱՎՈՅԱ
ԼԱՊԻԹ
ՍԱԿՈՒՐՈՒ
ԹԻՈՒ
ԿԱԼԻՄՍՈՆ
ՀԱՄՈՒՍ
ՀՈՍԿ
ԿՈԲՏԵ
ՀՈՌՈՆ
ՍԵԼԻՖԿ
ՄԵՐՍԻՆ
ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ
ԲԱԲԵԼ
ԱՍՍՈՒՐ
ԱՐԱՔԵ
ՍԻՆՈՊ
ԱՆԿՈՒՐԱ
ԷՍԿԻՇԵՀԻՐ
ՓՈՒՄԹԻՆ
ԹՈՐԻՈՆ
ԲԵՅՇԵՀԻՐ
ԲԵՅԼԵՍՈՒԹԱՄ
ԿՈՆԻԱ
ՍԵՅԻՇԵՀԻՐ
ԴԱՅՇԵՀԻՐ
ԴԱՅԼԱՆ
ՏՈՅԼԱ
ՄԱՍԻՍՈՆԻԱ
ՆԵԱ-ՆԻԿՈՊՈԼԻՍ
ՍԵՎԼՈ
ԹԻՄԻՆ
ԳՈՐԴԻՈՆ
ԴՈՐԱՍԱՐ
ՏՈՒՄԱ
ՄԱՅԱԹԻԱ
ԷՍԱԳԻԼ
ՄԱՅՈՒՄԱ
ՍԻՆՈՊ

կաղնոսի հովտում: Մեկ այլ մշակույթ, որը տարածվում է Էղրիդիր լեռից արևմուտք, ընդգրկում է հարավարևմտյան Անատոլիան: Կոնյայի այդ ժամանակաշրջանի խեցեղենը հիմնականում սև ու դարչնագույն, երբեմն՝ մուգ-դեղին ու կրեմագույն, իսկ ուշ փուլում և կարմիր մակերեսով, դեպի ներս թեք կտրած շուրթով խոր քրեղաններ են, գնդաձև կամ գլանաձև իրանով խեցանոթներ, որոնք առանձին դեպքերում զարդարված են կտրմամբ ստացված հորիզոնական ու բեկյալ գծերով, ինչպես և ձկան ողնաշար հիշեցնող զարդերով: Ինչ վերաբերում է Անատոլիայի հարավարևմտյան մասի հուշարձաններից հայտնաբերված խեցանոթներին, ապա դրանք, որակապես զիջելով առաջիններին, ունեն կարմիր, դեղնավուն, կարմրանարնջագույն մակերես և, զուրկ լինելով կտրվածքով ստացված զարդանախշից, ինչպես և ձևերով տարբերվելով Կոնիայում հայտնաբերվածներից, առանձին դեպքերում զարդարված են օխրայով ստացված զարդերով[12]: Տարածքա-ժամանակագրական այլ առանձնահատկություններ են դրսևորում Կոնիայի էնեոլիթյան նյութերը, ինչը և խոսում է տարածաշրջանում կատարված փոփոխությունների մասին: Ելնելով խեցեղենի առանձնահատկություններից՝ հետազոտողը դրանք դասում է երեք խմբում: Առաջին խմբին պատկանողները էնեոլիթի վաղ փուլին բնորոշ, շագանակագույն, սև կամ գորշ, երբեմն կարմիր ու դեղնակարմրավուն մակերեսով ամաններ են: Նյութերի այս խումբը, նշում է հեղինակը, տարածված լինելով գլխավորապես Բեյշեհիր–Սեյդիշեհիր տարածքում, հայտնի է նաև Մերսինից, Տարսոսից, Կիլիկիայի մի քանի հուշարձաններից: Այլ տարածք են զբաղեցնում խեցանոթների երկրորդ՝ դեղնադարչնագույն մակերեսին կարմիր, շագանակագույն կամ սև ներկով ստացված զարդերով ամանները: Հիմնականում Կոնիայի ու Կալիկադնոսի (Գյոկ-սու) հարթավայրերից հայտնաբերված այս նյութերը հայտնի են նաև Մերսինի XV – XVI շերտերից, հյուսիսային Սիրիայից, Անատոլիայից: Խեցանոթների այս խումբը կապվում է Քիոս–Թեսալիայից հայտնաբերվածների հետ: Ինչ վերաբերում է երրորդ խմբին, որի բնորոշ գիծը սպիտակ ներկով ստացված զարդերն են, ապա դրանք տարածված են Աֆյոնից Էլմալի–Բոլվադին– Կոնիայի հարթավայր տարածքում: Ամանների այս տեսակի հետ հանդիպում են և Քիոս, Թեսալիա, Ղումթեփե Ib հայտնի կտրվածքով ստացված զարդանախշ ունեցող ամաններ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Դինար – Էլմալի գծով անցնող տարածքի հյուսիսային մասի խեցեղենի վրա սպիտակ ներկը տարված է սև, իսկ հարավում՝ կարմիր մակերեսին: Շուտ ջնջվող սպիտակ գույնով ստացված զարդը, ինչպես նշվեց, Էգեյանից բացի, տարածված է և Մակեդոնիայում, Թեսալիայում, Կենտրոնական Հունաստանում և այլուր, բայց կարևոր է Ջ. Մելարտի այն դիտողությունը, որ եթե այդպիսիները Հունաստանում հանդես են գալիս ուշ նեոլիթում և վաղ հելլադիկ III, ապա Անատոլիայում նման ընդմիջում չի դիտվում: Ավելին, նյութերի մանրակրկիտ քննությունը հետազոտողին հանգեցնում է այն հետևության, որ խեցանոթների այս տեսակն իր տարբերակներով հանդերձ հյուսիս և արևելք է տարածվել հարավարևմտյան Անատոլիայից:

[12] J. M e l l a a r t. Early Cultures of the South Anatolian Plateau.– AS, XI, p. 159–184.

Էական է և այն հանգամանքը, որ Կոնիայի հարթավայրում ամանների այս տեսակի երևան գալու հետ տարածաշրջանի նախկին բնակավայրերը լքվում են: Այդ խեցեղենը հանկարծակի է հայտնվում և Մերսին XII (սպիտակով սև մակերեսին), իսկ վաղ բրոնզի սկզբում այն հանդես է գալիս իբրև Բեյշեհիր–Նիգդե տարածքի բնորոշ նյութերից մեկը: Այդ խեցանոթները հանդիպում են և Կիլիկյան Տավրոս–Դրունք Կիլիկիո–Կալիկադնոս հարթավայրում, ինչը և ցույց է տալիս, թե այդ մշակույթը ստեղծողները Կիլիկիա են թափանցել Կոնիայից, որի նախկին բնակավայրերը, ինչպես նշվեց, լքվել են այդ խեցանոթները բերողների երևան գալով: Վերջիններս Կոնիա են մուտք գործել Աղի լճի մոտ գտնվող լեռնանցքով, ուր հայտնաբերված են այդ խեցեղենի նմուշները: Կարևոր է և այն, որ չնայած Կենտրոնական Անատոլիայի և Կոնիայի՝ թույլ արտահայտված առանձնահատկություններ դրսևորող մշակույթների սահմանը, կարծես թե անցնում է Բորից հյուսիս և Նիգդեից հարավ ձգվող գծով, բայց այդ սահմանը շեշտված անցում չի դրսևորում. նշված գծի երկու կողմերում հայտնաբերված նյութերի ընդհանրությունները մեծ են: Փաստական նյութի քննությունը Ջ. Մելարտին հանգեցնում է այն եզրակացության, որ այդ մշակույթը ստեղծողները Արևմտյան Անատոլիայից են Կոնիա թափանցել, որտեղից և շարժվել են Կիլիկիա: Դրա ապացույցն է և այն, որ Կիլիկիայի ուշ էնեոլիթյան նյութերը, տարբեր լինելով Կոնիայում հայտնաբերվածներից, վաղ բրոնզի դարաշրջանում նույնանում են[13]:

Զգալի փոփոխություններ են դիտվում և հյուսիսում: Այդ են փաստում Էսկիշեհիր – Բաֆրա տարածքի էնեոլիթ – վաղ բրոնզեդարյան հուշարձաններից (Ջ. Բրրնին նշում է, որ ողջ հյուսիսային Անատոլիայում նեոլիթի հետք չկա. թերևս, Թեքե – Քյոյից գտնված մեկ բեկոր կարող է նեոլիթյան դիտվել) հայտնաբերված նյութերի քննության արդյունքները և Սինոպի մոտ գտնվող Դեմիրջի – Հյույուկ կոչվող բնակավայրի շերտագրական տվյալները: Նշված հուշարձանում էնեոլիթյան գորշ փայլեցրած, ներսից թեք կամ ուղղանկյուն փորագիր զարդեր, ինչպես և գծերով ու կետերով զարդարված (այդպիսիք գտնված են և Բաֆրայի մերձակա հուշարձաններում) ստորին շերտի խեցեղենին, առանց ընդմիջման փոխարինելու են գալիս կարմիր մակերես, կտրվածքով զարդ, ինչպես և սպիտակ ներկով ստացված նախշ ունեցող գունազարդ ամաններ: Այդ նյութերի հետ գտնված են ինչպես ոլորուն, այնպես էլ շրթից բարձրացող օղակաձև կանթ կամ լայն, խողովակաձև բռնակ ունեցող քրեղաններ, Էսկիշեհիր – Փոլաթլի – Սակարիա տարածքի ուշ էնեոլիթ – վաղ բրոնզի սկզբնական փուլին բնորոշ այլ տեսակներ: Դրանց բազմաթիվ զուգահեռները Յորտանում են, Տրոյա II – V, Ղումթեփե Ib և ծովեզրյա այլ հուշարձաններում: Հետազոտողը կարծում է, որ կանթերի նշված տեսակների, ինչպես և գոգավորվող հատակով քրեղանների սկզբնական օջախը, կարծես թե, Էսկիշեհիր – Փոլաթլին է և հարավարևմտյան Անատոլիան, որտեղից և դրանք հայտնվել են Տրոյայում II – IV, իսկ III հազ.՝ նաև Հալիսի շրջանում[14]: Ասվածը, կարծես թե, հաստատում է Մ. Օզդոդանի այն միտքը,

[13] J. M e l l a a r t. Preliminary Report on a Survey of Preclassical Remains in Southern Turkey.– AS, IV, 1954, p. 179, 197 – 199, 208 – 212; *Ն ո ւ յ ն ի՝* J. M e l l a a r t. Early Cultures of the South Anatolian Plateau, II (The Late Chalcolithic and Early Bronze Ages in the Konya Plain).– AS, XIII, 1963, p. 201–210.

[14] C. A. B u r n e y. Northern Anatolia before Classical Times.– AS, VI, 1956, p. 180–189.

թե IV հազ. վերջ – III հազ. սկզբում Արևմտյան Անատոլիայում խիստ ուժեղ է զգացվում Կենտրոնական Անատոլիայից եկող ազդեցությունը, որը և մեծապես պայմանավորում է քաղաքային բնույթի բնակավայրերի երևան գալը (Տրոյա I, Էնիշեհիր, Իզնիկ, Բալիկեսիր և այլն): Վերջիններս III հազ. իրենց ազդեցությունը տարածում են Թրակիայում բնակվող ցեղերի վրա[15]: Անատոլիայի նշված տարածքներից այդ խեցեղենն աստիճանաբար տարածվել է նաև հյուսիս-արևելք՝ Փոլաթլի/Անկարա – Սինոպ/Բաֆրա ուղղությամբ: Հետազոտությունների արդյունքները, ինչպես տեսնում ենք, ցույց են տալիս, որ հետագա տեղաշարժերը կատարվել են Էսկիշեհիր – Փոլաթլի – Անկարա տարածքն ընդգրկող օջախից:

Այժմ, եթե ընդունվում է, որ անատոլիական լեզվաընտանիքն ընդհանուր հնդեվրոպականից անջատվել է IV հազ. ոչ ուշ, ապա համաձայնվելով հետազոտողների այն տեսակետին, որ անատոլիական լեզվաընտանիքի խմբերը միաժամանակ է եղել[16], մնում է ենթադրել, որ դեպի արևելք տարածվող այդ մշակույթի կրողները արևմտաանատոլցիներն են հանդիսացել, որոնք և նշված ժամանակաշրջանում բնակեցրել են Փոքր Ասիայի մեծ մասը: Հավանական է ենթադրել, որ Բալկաններից Անատոլիա թափանցած ցեղերը, ըստ երևույթին, Անատոլիա են անցել Հունաստան–Դոդեկանեսով, ինչի մասին է թերևս խոսում Թրակիայում պարանագարդ և խեցեզարդ, իսկ Պարադիմիում՝ նաև գրաֆիտով ներկած խեցեղենի բացակայությունը: Հնարավոր է, որ այս հանգամանքը ևս հիմք հանդիսացած լինի Մ. Օզդողանի այն կարծիքին, թե այդ ցեղերը կարող է եկած լինեն ոչ թե Մարմարայով, այլ՝ Էգեյանով: IV հազ. սկզբում սկսված տեղաշարժի նշված ուղղությունը, կարծես թե, պատճառաբանում է և IV հազ. վերջում Կենտրոնական Անատոլիայից եկող ազդեցության ուժեղացումը Արևմտյան Անատոլիայում ու Թրակիայում: Է. Մելասի կարծիքին համահունչ այս իրավիճակը ենթադրել է տալիս, որ Բալկաններից աստիճանաբար հարավ տեղաշարժվածները, Դոդեկանեսով անցնելով Անատոլիայի ծովեզրյա շրջանները, շարժման մեջ են դրել տեղի բնակչությանը, որի մի հատվածը, չի բացառվում նորեկների առանձին խմբերի հետ ժամանակ անց շարժվել է Կենտրոնական Անատոլիա (Էսկիշեհիր, Սակարիայի գետահովիտը), ուր և ճյուղավորվելով, մեկ թևով դիմել է արևմուտք և հիմք դրել Տրոյա I և այլն բնակավայրերի, մյուսով՝ հյուսիս-արևելյան կողմ: Հյուսիսային և հարավային տարածքների մշակույթների նմանությունը, բայց միաժամանակ և խեցեղենի առանձնահատկությունների վերաբերյալ Ջ. Մելարտի կատարած դիտողությունները ենթադրել են տալիս, որ հարավարևմտյան Անատոլիայից մեկ այլ ճյուղ շարժվել է հարավարևելյան ուղղությամբ՝ դեպի Կոնիա:

Հետևելով արևմուտքից արևելք շարժվող այդ մշակույթի տարածման սահմաններին, տպավորություն է ստեղծվում, թե Բաֆրայի շրջանում այդ առաջընթացը կասեցվել է: Ճիշտ է, ծովեզերքով՝ Արևելապոնտական լեռնաշղթայով արևելք ընկած

---

[15] M. Ö z d o ğ a n. Marmara Region…, p. 286.

[16] *Տե՛ս նաև՝* Г. А. М е л и к и ш в и л и. Возникновение Хеттского царства и проблема древнейшего населения Закавказья и Малой Азии.– ВДИ, 1965, № 1, с. 14–15.

տարածքում այլ տվյալներ մեզ հայտնի չեն, բայց, թվում է, թե այս ենթադրության օգտին է խոսում այն հանգամանքը, որ Փոքր Հայքի տարբեր հուշարձաններից (Արգուվան, Հինձոր, Պալու, Հեքիմխան, Էլբիստան, Սիլբիստան և այլն) հայտնաբերված սակավաթիվ էնեոլիթյան նյութերն ընդհանրություն չունեն վերը նշվածների հետ. տարածքի տեղական խեցեղենը հիմնականում կոպիտ, թույլ թրծված, դեղնադարչնագույն, սև կամ գորշ, երբեմն թեթևակի փայլեցված մակերեսով պարզ ամաններ են: Գտնված են և հալաֆյան, ուշ ուբեյդյան՝ տարբեր ժամանակների պատկանող խեցեբեկորներ, որոնք փաստում են V–IV հազ. տարածաշրջանի կապերը Սիրիայի և հյուսիսային Միջագետքի հետ: Ինչ վերաբերում է սակավաթիվ նմուշներով հայտնաբերված տեղական գունազարդին, ապա այն ներկայացված է բազմաթիվ մութ հարցեր պարունակող, VI հազ. թվագրվող, հասունյան մշակույթի խեցեղենը հիշեցնող նմուշներով, որոնց կրեմագույն կամ շագանակագույն մակերեսին արված են խամրած կարմիր գույնով պարզ զարդեր[17]:

Այս տվյալները, որոշ չափով, լրացնելու են գալիս Էլյազիգի մոտ գտնվող Կեբանի ջրամբարի տարածքում եղած հուշարձանների (Աշվան Կալե, Տաշկուն Մեվկի, Թեփեջիկ և այլն) պեղումների արդյունքները: Տվյալ դեպքում հատկապես կարևոր են Թեփեջիկ և Կորուջու-թեփե բազմաշերտ բնակատեղիների պեղումներից ձեռք բերված նյութերը: Նշված հուշարձաններից առաջինի ստորին շերտում հայտնաբերված են հարդախառն կավախմորից պատրաստված, պարզ, Ամուկ F փուլում և Տարսոսում իրենց զուգահեռներն ունեցող էնեոլիթյան ամաններ, որոնց շարքում առկա են և հակազարդ (այդպես ենք թարգմանել “reserved slip” *տերմինը) ունեցող սակավաթիվ բեկորներ, ինչպես և XV, XXIV հորիզոններից գտնված ուբեյդյան ու հալաֆյան նմուշներ: Կարևոր են XXIV հորիզոնից հայտնաբերված էնեոլիթյան նյութերը. դրանք սև կամ բաց գորշավուն, երբեմն թեթևակի փայլեցրած բեկորներ են, որոնց շարքում տեսնում ենք և հավելագոտիների վրա եղունգազարդ ունեցողներ, իսկ առանձին նմուշների վրա միջանցիկ անցքեր են բացված: Այս շերտին անմիջապես հաջորդում է վաղ բրոնզեդարյանը, որտեղից հայտնաբերվել են Կուր - արաքսյան կամ հեղինակի կողմից «կարագյան» անվանված խեցանոթներ: Ինչ վերաբերում է Կորուջութեփեից գտնված էնեոլիթյան նյութերին, ապա դրանք գտնվել են 2 մ հզորություն ունեցող ջրաբերուկային նստվածքի տակ ընկած շերտից և ներկայացված են նույն՝ սև, թեթևակի փայլեցրած բեկորներով, որոնք զարդարված են կոճակաձև ելուստներով և մատնակոսներով. այդ նյութերն ուղեկցված են հալաֆյան և հյուսիս-ուբեյդյան ամանների բեկորներով: Ջրաբերուկային նստվածքին հաջորդող շերտում գտնված են բաց դարչնագույն և նարնջագույն մակերես ունեցող ներմուծված ամանների բեկորներ, իսկ հաջորդ շերտում՝ նույն Կուր-արաքսյան մշակույթի խեցանոթներն են, պայտաձև հենակները և վաղ բրոնզեդարյան այլ նյութեր, որոնք ռադիոածխածնային մեթոդով թվագրված են մոտ 3400 թ.: Այդ նյութերը, որոնց շարքում առկա է և շրջանաձև օջախ, հեղինակների կողմից դիտված են իբրև ուշ էնեոլիթյան[18]:*

---

[17] C. A. B u r n e y. Eastern Anatolia in the Chalcolithic and Early Bronze Age.– AS, VIII, 1958, p. 158 – 164.

[18] M. v a n - L o o n, H. G. G u t e r b o c k. Korucutepe Excavations 1970.– “Keban Project” (KP), 1970, Ankara, 1972, p. 83 – 85; U. E s i n. Tepecik Excavations.– KP, 1970, Ankara, 1972, p. 151–158

Կարևոր են և Մալաթիայի մոտ գտնվող Արսլան-թեփե կոչվող բազմաշերտ հուշարձանի պեղումների արդյունքները: Այդտեղ IV հազ. III քառորդով թվագրվող (C-14 տվյալներով՝ 3450 – 3230 և 3300 – 3150 թթ.) VIA հրդեհված շերտի բնակավայրից, որը, Ա. Պալմիերիի կարծիքով վարչական կենտրոն է եղել, հայտնաբերվել են մկնդեղային բրոնզից պատրաստված զենքեր, միջագետքյան կնիքներ, հակազարդմամբ նախշված ամաններ, ուշ ուրուկյան շշաձև անոթներ, այլ տեսակներ, որոնց շարքում ուշադրություն են գրավում Կուր - արաքսյանին մերձեցող նմուշներ: Այդ շերտին անմիջապես հաջորդող, IV հազ. վերջին քառորդով թվագրվող (C-14 տվյալներով՝ 3180–2990 թթ.) VIB շերտում հայտնաբերվել են երկու տարբեր տարածքների բնորոշ խեցանոթներ: Առաջիններն անիվով պատրաստված բարձրորակ ամաններ են, որոնց զուգահեռները հիմնականում Տիգրիս–Խաբուր տարածքն ընդգրկող և այդտեղից այլ շրջաններ տարածված Նինվե-5 փուլի մշակույթում են, իսկ երկրորդ՝ հիմնական խումբը, ներկայացված է Կուր - արաքսյան կամ արևելաանատոլիական կոչված մշակույթին բնորոշ տարատեսակ խեցանոթներով: Դրանց առկայությունը հեղինակը բացատրում է հյուսիսաբնակների՝ Մալաթիայի շրջան թափանցելու հետ[19]:

Չծանրաբեռնելով շարադրանքն անհարկի մանրամասներով, նշենք միայն, որ մասնագետներից շատերի կողմից ընդունվող այս տեսակետին, որի հիմքում ընկած է Կուր - արաքսյան միջագետքն այդ մշակույթի բնօրրան հանդիսանալու Բ. Կուֆտինի արտահայտած կարծիքը[20], այլ հետազոտողներ, որոնք առավել հիմնավորված են համարում նշված մշակույթի նախասկզբնական օջախը Արևելյան Անատոլիան համարվելը, թերահավատորեն են մոտենում: Վերջիններս իրենց կարծիքը հիմնավորում են այն բանով, որ Կուր-արաքսյան մշակույթը Արևելյան Անատոլիայում ավելի վաղ է հանդես եկել, և կապը էնեոլիթի հետ անմիջական լինելով չի խզվում[21]: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և Էլբիստանից հայտնաբերված էնեոլիթ–վաղ բրոնզեդարյան նյութերը: Դժբախտաբար, Գյոկսունից, Արիստիլից, Սյուրգյուից, Յասսի-Հյույուկից և Տանիրից գտնված, էնեոլիթի միջին և ուշ փուլերին պատկանող գտածոները ներկայացված են սակավաթիվ ու վերգետնյա բեկորներով, ինչը զգալիորեն խոչընդոտում է որոշ հարցերի պարզաբանմանը:

Հենվելով առկա տվյալների վրա, կարելի է ասել, որ նշված վայրերից հայտնաբերված նմուշները մուգ դեղնաշագանակագույն, դեղնագորշավուն, կարմրաշագանակագույն մակերեսներով խեցանոթների մասեր են: Գտնված են և ուշ - ուբեյդյան, ինչպես և սիրիական արտադրանքի նմուշներ, որոնք թվագրվում են IV հազ. կեսերով: Այդ գտածոների շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում Տանիրից և Յասսի-Հյույուկից հայտնաբերված լայնաբերան, գլանաձև բարձր վիզ, դուրս ճկվող շուրթ և կավախմորում հարդի խառնուրդ պարունակող, անհամաչափ թրծումով կճումների բեկորները, որոնք, ինչպես նշում է Ջ. Բրաունը, կապեր դրսևորելով կիր-

---

[19] A. P a l m i e r i. Excavations at Arslantepe (Malatya).– AS, XXXI, 1985, p. 101 – 105 *(հմմտ.՝ նկ. 2:7, 9 – 11).*

[20] Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941, гл. III.

[21] *Տե՛ս* G. D. S u m m e r s. Yanik Tepe and the Early Trans-Caucasian Culture, Problems and Perspectives.– “Ancient Near Eastern Studies”, Peaters, 2004, p. 617 – 630.

բետ-կերակյան խեցեղենի հետ, IV հազ. ուշ թվագրվել չեն կարող: Նշելով վաղ բրոնզեդարյան նյութերի հետ ունեցած մերձակցությունը (այս տեսակետից ուշագրավ է և Արիստիլից հայտնաբերված խեցանոթը, որը հեղինակը նույնպես ուշ էնեոլիթյան է դիտում), հետազոտողը նկատել է տալիս, թե բարդությունը (ուշ էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան խեցեղենը տարբերակելու իմաստով) արևմտյան տարածքների վաղ բրոնզեդարյան խեցեղենի վաղ փուլին բնորոշ հատկանիշների (անզարդ մակերես, յուրատեսակ լայն ուղիղ կողեր և այլն) պահպանման մեջ է: Սև փայլեցված մակերեսով այդ ամանները, նշում է հեղինակը, տարածված լինելով Թիլավշինից Հալիսի ակունքներն ընկած տարածքում (հրատարակված են 16 հուշարձանից հայտնաբերված նյութեր), կրում են արևմուտքի ազդեցության դրոշմը: Այս առումով կարևորվում են ոչ միայն Թիլավշինից Հալիսի ակունքներն ընկած տարածքի, այլև՝ Կոնիայից հայտնաբերված, ուշ էնեոլիթի դարաշրջանին պատկանող որոշ խեցատեսակների վրա դիտվող առանձին հատկանիշներ: Տվյալ դեպքում նկատի ունենք ոչ միայն առանձին կճուճների ձևերը և դրանց մակերեսի սև գույնը, այլև՝ այդ անոթների վզի հիմքը գոտևորող հարթակաձև փոքր ելուստը, որը, թերևս, կարող է նախաձև դիտվել Կուր-արաքսյան մշակույթին բնորոշ համանման հատկանիշների: Ցավոք, նյութերի սակավությունը թույլ չի տալիս ավելի մանրամասն ուսումնասիրել այդ կապերի բնույթը. դրանք կարող են հստակվել Արևմտյան Հայաստանի և Կապադովկիայի համաժամանակյա հուշարձանների հետազոտությամբ: Այսօրվա վիճակով առկա տվյալները թույլ են տալիս ասել, որ արևմուտքին բնորոշ երկգույն զարդով խեցեղենը, որը նշված ժամանակաշրջանում տարածված է Կենտրոնական Անատոլիայում, Կոնիայում, Կիլիկիայում, Մալաթիայից արևելք չի հանդիպում[22]: Հետևաբար, Բալկաններից Հայկական լեռնաշխարհ նոր էթնոս մուտք գործելու կարծիքը, հնագիտական նյութերի ուսումնասիրությամբ, չի հաստատվում:

Արևմտյան Անատոլիայի ազդեցությունը Մալաթիայի մատույցներից արևելք չի տարածվում և վաղ բրոնզի դարաշրջանում. հետևաբար, այդ ընդհանրությունների առկայությունը կարող է նախկինից եկող փոխազդեցությունների և ավանդույթների պահպանման ու դրանց զարգացման արգասիք հանդիսանալ, բայց ոչ ամենևին դեպի արևելք տարածվող արևմտաանատոլիական մշակույթի ազդեցության կամ առավել ևս՝ առկայության արդյունք լինել: Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և Էլյազիգ–Մալաթյա–Կարակայայի շրջաններից հայտնաբերված, ձեռքով պատրաստված տեղական գունազարդ ամանները, որոնց շարքում առկա են և ուրուկյան ավանդույթները շարունակող, շրթի վրա ելունդագոտի ունեցող օրինակներ, ինչը և հեղինակներին բերել է այն հետևության, թե վաղ բրոնզի դարաշրջանում տարածաշրջանի խեցեղենը դրսևորում է Անատոլիայից և Հյուսիսային Սիրիայից եկող ազդեցության դրոշմը[23]: Հարավի հետ կապեր դրսևորող Հայկական լեռնաշխարհի մշակույթն այլ է: Հետազոտողները համամիտ են, որ տարածքի ու-

[22] G. H. B r o w n. Prehistoric Pottery from the Antitaurus.– AS, XVII, 1967, p. 130–135, fig. 9–11.

[23] S. R. B l a y l o c k, D. H. F r e n c h, G. D. S u m m e r s. The Adiyaman Survey: An Interim Report.– AS, XL, 1990, p. 101–102.

բույն մշակույթն առնչություն չունի Փոքր Ասիայի և հարավի միանգամայն տարբեր մշակույթների հետ:

Չծանրանալով մասնագիտական գրականության մեջ առկա նյութերի հիման վրա լուսաբանված այս և այլ հարցերի վրա, սոսկ շարադրանքի ամբողջականությունը պահպանելու նպատակով, ներկայացնենք միայն տարածքի մշակույթի զարգացման, հետազոտողների կողմից ընդունված հանգուցային կետերը, նշելով միաժամանակ, որ VI–IV հազ. կեսերը ներառնող այդ մշակույթի ծագումը և տարածումը դեռևս վերջնականապես պարզաբանված չէ: Առկա նյութերը ցույց են տալիս, որ էնեոլիթի վաղ փուլին բնորոշ խեցանոթները հիմնականում կարմրաշագանակագույն, սև, գորշ, բոսորագույն մակերես, կավախմորում ավազ, մանրատված խեցեղեն, սակավ դեպքերում՝ մանրատված վանակատ պարունակող, անհամաչափ թրծումով նյութեր են, որոնց շարքում հանդիպում են և՛ դեղնաշագանակագույն, և՛ կամ վարդագույն լոսվածքով կոկված նմուշներ: Կոպիտ, ձեռքով պատրաստված այդ ամանների հարթ հատակներին առանձին դեպքերում առկա են խսիրից պահպանված դաջվածքներ: Հիմնականում անզարդ այդ ամանների առանձին նմուշներ զարդարված են խումբ-խումբ կամ շարք կազմող պտկիկաձև ելուստներով. առկա են և ուղղահայաց իջնող հավելադիր կարճ երիզներ, կոճակաձև ելուստներ, ալիքներ, ինչպես և կտրվածքով ստացված եղննաձև զարդեր ու զուգահեռ տարված սանրատամ գծեր: Առանձին նմուշների վրա առկա են և նշաձև, շրջանաձև, պայտաձև, խաչաձև ու մարդակերպ հավելադիր զարդեր, իսկ եզակի օրինակների վարդագույն մակերեսին դիտվում են բալագույնով կամ կարմիր ու սև ներկով տարված զարդագծեր:

Զարդատեսակներով ու դրանց ստացման եղանակներով այդ խեցանոթները, ինչպես նշում են հետազոտողները, մերձենում են բազմաթիվ մութ հարցեր պարունակող հասունյան, բայց հատկապես նախահասունյան (Սոտտոյի կամ Ումմ - Դաբագիյա) մշակույթի նյութերին, որոնք, սակայն, առանձնանում են իրենց ձևերով: Ներկայումս այդ մերձակցության պատճառները դեռևս պարզված չեն: Հակառակ դրան, հալաֆյան և կամ այդ մշակույթի ազդեցությամբ տեղում պատրաստված նյութերի վերաբերյալ, որոնք երևան են գալիս համեմատաբար երիտասարդ տարիք ունեցող համալիրներում (V–IV հազ. սկիզբ), հետազոտողներն ավելի որոշակի են արտահայտվում. արևելքում և հյուսիս - արևելքում՝ հյուսիսարևմտյան Իրան հասած հալաֆյան մշակույթը, որն իր արևելյան և արևմտյան թևերով ընդգրկել է Մոսուլ – Արփաչայ – Շիմշարայից մինչև Չագար-բազար – Կարքեմիշ և հյուսիսում Ամիդ ու Վանա լճի հարավն ընկած տարածքները, իր ազդեցությունը հյուսիս կարող էր տարածել և հյուսիսարևմտյան Իրանից: Ինչ վերաբերում է տեղական խեցեղենին, որի համար գունազարդումը մնում է իբրև օտար, տարածում չստացած երևույթ, հանդես է գալիս նույն՝ կոպիտ, թույլ թրծված, բաց կարմրավուն, բոսորագույն, կարմրաշագանակագույն և գորշ մակերեսներ ունեցող նմուշներով, որոնց զարդերի մեջ երևան են գալիս և սանրատամ զուգահեռ գծեր, եղունգազարդեր: Առկա են և միջանցիկ անցքեր ունեցող խեցեղենի տեսակներ (այդպիսիք հանդիպում են և վաղ բրոնզում):

Էնեոլիթի ուշ փուլին բնորոշ այդ խեցանոթների շարքում հանդիպում են և Կուր - արաքսյան նմուշներին մերձեցող ամաններ[24], ինչպես և ազդեցության ոլորտներով Սիրիա, հյուսիսային Միջագետքից հյուսիս՝ մինչև Արևմտյան Իրան ու գրեթե Միջին Ասիա հասած հսկայական տարածքը ընդգրկող հյուսիս – ուբեյդյան նյութեր: Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերի հուշարձաններից հայտնաբերված այդ նյութերը մեծ նշանակություն ունեն այլևայլ հարցերի պարզաբանման, բայց առաջին հերթին էնեոլիթ – վաղ բրոնզեդարյան մշակույթների միջև առկա կապերը վեր հանելու և դրանով իսկ հիմնավորելու այն հետազոտողների կարծիքը, որոնք Կուր - արաքսյան մշակույթի ձևավորման օջախը համարում են ոչ թե տարածաշրջանի արևելյան կամ արևմտյան մասը, այլ՝ ողջ Հայկական լեռնաշխարհը: Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում և օտարամուտ մշակույթների պատկանող նյութերի տեղադրությունը, որը, կարծում ենք, կողմնակիորեն այդ է փաստում: Իրոք, եթե հարավային մշակույթները Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասերում իրենց ներկայությունը դրսևորում են սակավ նյութերով և կամ ազդեցության արդյունք հանդիսացող, տեղական ճաշակ կրող ընդօրինակումներով, ապա տարածաշրջանի հարավային և արևմտյան շրջանների հուշարձաններում (Պուլուր, Պալու, Մալաթիա, Էլյազիգ, Հեքիմխան և այլն) դրանք ավելի հաճախ և զանգվածաբար են հանդես գալիս: Տպավորությունն այնպիսին է, որ հարավային այդ մշակույթները, բայց հատկապես հյուսիս – ուբեյդյանը, որը հարավ - արևմուտքում կանգ է առնում Ադյաման – Մերսինի մոտ, կարծես, չկարողանալով թափանցել Հայկական լեռնաշխարհի խորքերը, փորձում է արևմուտքից օղակել տարածաշրջանը. վերջինիս բնորոշ մշակույթի արևմտյան սահմանը, ինչպես տեսանք նյութերի հպանցիկ անդրադարձից, ուրվագծվում է ուբեյդյան և հյուսիս – ուբեյդյան նյութեր պարունակող հուշարձանների շղթայով: Այս իրավիճակը, որը բացառում է հայաբարբառ ցեղերի (լեզվաբանական հետազոտությունները փաստում են, որ հայերենը իբրև առանձին լեզու գոյություն ուներ արդեն վաղ բրոնզի դարաշրջանում) Բալկաններից և կամ

[24] *Ռ. Մ. Թորոսյան. Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ. թ. ա. 4 հազ.), Երևան, 1976, էջ 92–94, աղ. 9:*

Արևմտյան Անատոլիայի որևէ տարածքից արևելք տեղաշարժվելը, հաստատում է այն հետազոտողների տեսակետը, որոնք հայ ժողովրդի բնօրրանը Հայկական լեռնաշխարհն են համարում:

БАЛКАНСКАЯ КОНЦЕПЦИЯ ПРОИСХОЖДЕНИЯ АРМЯН И АРХЕОЛОГИЧЕСКИЕ ДАННЫЕ (VI–IV ТЫС. ДО Н. Э.)

ОНИК ХНКИКЯН

Р е з ю м е

Основываясь на выводах археологических исследований, сделана попытка в хронологической последовательности следовать изменениям археологической ситуации Балканского полуострова и Малой Азии в VI–IV тыс. до н. э. и выяснить, в какой степени они соответствуют балканской концепции. Исследования показывают, что в VI–IV тыс. до н. э. западные культуры, будь то балканские или западноанатолийские, не проникали на Армянское нагорье. Думается, что дальнейшие раскопки в Западной Армении и Каппадокии внесут конкретность в наши представления.

THE BALKAN CONCEPTION OF ARMENIANS' ORIGIN AND THE ARCHAEOLOGICAL DATA (the 6th – 4th MILLENNIA B.C.)

ONIK KHNKIKYAN

S u m m a r y

Based on the conclusions of archaeological investigations, the author tried to observe the chronological changes of the archaeological situations in Balkan Peninsula and Anatolia in the 6th-4th millennia B.C., to find out what they have in common with the Balkan conception. The investigations show that in the 6th-4th millennia B.C. neither the western cultures, nor the Balkan ones penetrated into Armenian Highland. It seems that the future excavations in West Armenia and Cappadocia will clarify our images on that issue.